ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՄԵԿՆԻ ՀՈՐԴԱՆԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 14 հունվարի 2000 թ.:

Այսօր, երեկոյան ժամը 9.15-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանից կմեկնի Հորդանան, որտեղից սկսելու է իր ուխտագնացությունը Տերունական Սրբավայրեր:

Վեհափառ Հայրապետի շքախմբի կազմում են Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մեսրուռ եպս. Չուլջյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, Տ. Արշակ արդ. Խաչատրյանը՝ իբրև գավազանակիր, և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Արշավիր Գաբուճյանը:

Նորին Սրբությունը Մայր Աթոռ է վերադառնալու հունվարի 25-ին:

*

* *

Հայրապետական տնօրինությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ընթացիկ գործերը Ամենայն Հայոց Կաթողիկոսի բացակայության շրջանում կվարի Վանական խորհուրդը:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ